

7-րդ դասարան /առաջին փուլ/

Տարբերակ 2

1. Նշված թվերից ընտրեք այն թիվը, որը բաժանվում է 36-ի:

- ա) 1056 բ) 3366 գ) 1164 դ) 1224

2. Գտեք $\left(7 - 9\frac{1}{2} : 3,8\right) \cdot \frac{7}{3}$ արտահայտության արժեքը:

- ա) 4,5 բ) $-\frac{35}{38}$ գ) 10,5 դ) $\frac{35}{38}$

3. Գտեք 2016, 16, 27, 7 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

- ա) 2016 բ) 1 գ) 144 դ) այլ պատասխան

4. 360 դմ^2 –ն 10 մ^2 -ու n ր տոկոսն է:

- ա) 50 բ) 36 գ) 64 դ) 32

5. Արամի ունեցած գրքերի քանակը 150-ից շատ է և 200-ից քիչ: Հայտնի է, որ Արամի գրքերի քանակի 20%-ը մաթեմատիկայի են, իսկ $\frac{1}{9}$ -ը՝ ֆիզիկայի: Գտեք Արամի գրքերի քանակը:

- ա) 175 բ) 185 գ) 180 դ) այլ պատասխան

6. Հենվելով ձախ ոտքի վրա կենդուրուն թռչում է ճիշտ 5մ, հենվելով աջ ոտքի վրա՝ ճիշտ 1մ, իսկ հենվելով երկու ոտքի վրա՝ ճիշտ 7մ: Ամենաքիչը քանի՞ թռիչք պետք է կատարի կենդուրուն, որպեսզի անցնի ուղիղ 1000մ:

- ա) 143 բ) 144 գ) 145 դ) այլ պատասխան

7. Նշված թվերից n րը կարող է լինել չորս հաջորդական բնական թվերի արտադրյալի վերջին երեք թվանշանները:

- ա) 126 բ) 160 գ) 116 դ) 117

8. Նարինջներով լի արկղը կշռում է 45 կգ: Երբ վաճառեցին նարինջների կեսը, արկղի կշիռը դարձավ 25 կգ: Ինչքա՞ն է կշռում դատարկ արկղը:

- ա) 14 բ) 5 գ) 7 դ) այլ պատասխան

9. Բոլոր բնական թվերը ներկել են երեք գույնով: 1-ը՝ կարմիր, 2-ը՝ կապույտ, 3-ը՝ կանաչ, 4-ը՝ կարմիր, 5-ը կապույտ, 6-ը կանաչ և այդպես շարունակ: Ո՞ր գույնով է ներկված կարմիր և կապույտ թվերի գումարը:

- ա) միայն կարմիր բ) կանաչ կամ կապույտ

- գ) միայն կապույտ դ) այլ պատասխան

10. 10-ի չբաժանվող երկնիշ թիվը բաժանել են այդ երկնիշ թվի վերջին թվանշանի վրա: Գտեք ստացված քանորդներից հնարավոր մեծագույնի արժեքը:

ա) 61 բ) 11 գ) 81 դ) այլ պատասխան

11. Գտեք 25-ի բաժանվող այն քառանիշ թվերի քանակը, որի վերջին թվանշանը հավասար է մյուս երեք թվանշանների գումարին:

ա) 3 բ) 4 գ) 5 դ) 12

12. 2016, 2017, ..., 2101 թվերից գտեք այն թվերի քանակը, որոնց վերջին թվանշանը հավասար է մյուս երեք թվանշանների գումարին:

ա) 4 բ) 5 գ) 12 դ) այլ պատասխան

13. A և B գյուղերից միաժամանակ միմյանց հանդեպ դուրս եկան երկու հեծանվորդ և հանդիպեցին 36 ընդհանուր անց: Առանց կանգ առելու առաջին հեծանվորդը հասավ B և ամիջապես հետ վերադարձավ, իսկ երկրորդ հեծանվորդը մի փոքր ուշ հասավ A և ամիջապես հետ վերադարձավ: Շարժումը սկսելուց քանի՞ ընդհանուր անց հեծանվորդները կհանդիպեն երկրորդ անգամ:

Պատ.՝

14. Գտեք այն երկնիշ թվերի քանակը, որոնց թվանշանների գումարը զույգ է:

Պատ.՝

15. Գտնել 792-ի բոլոր պարզ բաժանարարների քանակը:

Պատ.՝

16. Քանի՞ զրոյով է վերջանում 2016-ից 2029 բնական թվերի արտադրյալը:

Պատ.՝

17. Բնական թիվը կանվանենք հետաքրքիր, եթե այն մեծ է իր վերջին թվանշանից 11 անգամ: Գտեք հետաքրքիր թվերի քանակը:

Պատ.՝

18. Շրջանագծի՝ վրա վերցրել են 8 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երկուսը՝ կապույտ գույնով, իսկ չորսը՝ կանաչ գույնով: Գտեք այն հատվածների քանակը, որոնց ծայրակետերը ներկված են տարբեր գույներով:

Պատ.՝

19. Գտեք այն հնգանիշ թվերի քանակը, որոնք ձախից աջ և աջից ձախ կարդացվում են նույն ձևով (օրինակ՝ 64246, 10501):

Պատ.՝

20. Գտեք 372*4* տեսքի վեցանիշ թվերի քանակը, որոնք բաժանվում են 18-ի:

Պատ.՝